ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

(ԳԻՐ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Հեղինակ՝ լոգոպեդ Արուսիկ Մարաբյան

Գրավոր խոսքի դժվարություններ

Ինչպե՞ս ծնողը հասկանա և ժամանակին կանխի գրավոր խոսքի խանգարումները

Վերջին ժամանակներում ծնողներին շատ է մտահոգում այն հարցը, թե ինչպես ճիշտ կազմակերպել նախադպրոցական տարիքի երեխաների լիարժեք զարգացումը, ինչպես նախապատրաստել դպրոցին:

Հանրակրթական կրթության 1ին դասարանի ծրագիրը իրենից ներկայացնում է բանավոր և գրավոր խոսքի ուսուցում:

Եթե 6տ . երեխան դպրոց ընդունվելիս արդեն ունենում է նորմայում զարգացած բանավոր խոսք , ապա գրավոր խոսքին ծանոթանում է հենց 1 ին դասարանում: Իսկ գրավոր խոսքը, ի տարբերություն բանավոր խոսքի, առավել բարդ և ընդգրկուն գործընթաց է. ներառում է 2 կարևոր ոլորտ՝ **գիր և ընթերցանություն**:

Գիրն ու ընթերցանությունը խոսքային գործունեության ձևավորման բարդ ու բազմամակարդակ պրոցեսներ են, որի իրականացմանը մասնակցում են մի շարք վերլուծիչներ՝ խոսքալսողական, խոսքաշարժողական, տեսողական, տեսողատարածական, ընդհանուր շարժողական: Նրանց միջև գրի ու ընթերցանության պրոցեսում ձևավորվում է սերտ կապ ու փոխկապակցվածություն:

Գիրն ու ընթերցանությունը համակարգային ֆունկցիաներ են, ուստի այդ համակարգի որևէ օղակի կամ օղակների ոչ լիարժեք աշխատանքը բերում է ամբողջ համակարգի աշխատանքի թերացմանը:
Իսկ երբ կա թերացում, դա վկայում է խանգարման մասին:
Գրի և ընթերցանության սխալները էականորեն տարբերվում են ուղղագրական ֆիզիոլոգիական սխալներից, և դրանց շտկմամբ զբաղվում է լոգոպեդը:

Դիսլեկսիան կարդալու գործընթացին մասնակից բարձրագույն հոգեկան ֆունկցիայի մասնակի յուրահատուկ խանգարում է՝ պայմանավորված **կայուն բնույթի կրկնվող** սխալներով:
Առանձնացնում են հետևյալ հիմնական տեսակները.

1. Հնչութային /ֆոնեմատիկական/
2. Իմաստային /սեմանտիկական/
3. Քերականական /ագրամատիկական/
4. Հիշողական /մնեստիկական/
5. Տեսողական /օպտիկական/
6. Շոշափողական /տակտիլային/

Դիսգրաֆիան գրելու գործընթացին մասնակից բարձրագույն հոգեկան ֆունկցիայի մասնակի յուրահատուկ խանգարում է՝ պ այմանավորված **կայուն բնույթի կրկնվող** սխալներով: Առանձնացնում են հետևյալ հիմնական տեսակները.

1. Հնչարտաբերման դիսգրաֆիա
2. Հնչույթների տարբերակման խանգարումների հիման վրա առաջացած դիսգրաֆ իա /ակուստիկական/
3. Լեզվական վերլուծության և համադրության խանգարումներով պայմանավորվ ած դիսգրաֆիա
4. Քերականական /ագրամատիկական/ դիսգրաֆիա
5. Տեսողական /օպտիկական/ դիսգրաֆիա

Դիսկալկուլիան գլխուղեղի գագաթային բլթի խանգարում է՝ պայմանավորված թվաբանական գործողություններ կատարելու դժվարություններով: Նրանք չեն զգում թվերը, մաթեմատիկական նիշերը, խանգարված է ժամանակի ու տարածության զգացողությունը:

Գրի ու ընթերցանության խանգարումներով մարդկանց թիվն ամբողջ աշխարհում կազմում է ողջ բնակչության 10-15%-ը: Նյարդահոգեբանական տեսանկյունից գրի ու ընթերցանության խանգարումներով երեխաները կազմում են ուսումնական պրոցեսում դժվարություններ ունեցող երեխաների մի զգալի մասը:

▲ Ինչպե՞ս ծնողը և դասվարը հասկանա երեխայի մոտ իրոք կա գրի և ընթերցանության խանգարում, թե պարզապես ժամանակավոր ֆիզիոլոգիական դժվարություններ են:

Ահա այն ցուցիչները, որոնք կարող են վկայել խնդրի առկայությունը և դասվարը կարող է այս ցուցիչներով թեստավորել և հետազոտել երեխային։

Խոսքային ախտանիշները

- Տառերի գրության աղավաղում
- Գրաֆիկորեն մոտ տառերի փոխարինումը միմյանցով
- Հնչարտաբերմամբ մոտ հնչյունների փոխարինումը միմյանցով
- Բառի հնչունա-տառային կառույցի աղավաղում(տառերի բացթողումներ, ավելացումներ, վանկերի ավելացումներ ու բացթողումներ)
- Նախադասության կառույցի աղավաղում(բառերի մասերի առանձին գրում, բառերի միացում իրար)
- Ագրամատիզմ
- Հայելային գիր ու ընթերցանություն
- Ընթերցում են շատ դանդաղ
- Չեն հասկանում ընթերցածի իմաստը
- Թռիչք են կատարում տողից տող
- Խառնում են հոլովական վերջավորությունները
- Փորձում են առաջին ընթերցած տառերից գուշակել բառը
- Վանկերն առաջ ու հետ են կարդում, ավելացնում կամ բաց են թողնում
- Բառը փոխարինում են այլ բառով
- Մշտապես փոխարինում են հնչողությամբ մոտ տառերը

Ոչ խոսքային ախտանիշներ

- Ոչ լիաժեք են պատկերացնում ձևերն ու մեծությունները
- Դժվարանում են մարմնի աջ ու ձախ մասերը տարբերակել
- Դժվարանում են հավասարակշռված (կոորդինացիոն) շարժումներ կատարելիս
- Բնորոշ է ուշադրության դեֆիցիտը, որը երբեմն ուղեկցվում է հիպերակտիվությամբ

- Ձեռքի բարձր կամ ցածր տոնուսը, որն ուղեկցվում է արագ հոգնածությամբ

Սովորաբար գրավոր խոսքի յուրացման փուլը ոչ բոլոր երեխաներն են կարողանում սահուն ու հեշտ կերպով հաղթահարել:

Որպեսզի կանխենք այն հնարավոր դժվարությունը, որին հանդիպելու է երեխան գրել, կարդալ սովորելիս, պետք է ակտիվ կերպով աշխատել հետևյալ ֆունկցիաների զարգացման ուղղությամբ:

Այսպիսով՝

1. **Հնչութային լսողության զարգացում**
2. **Հնչունային վերլուծություն և համադրության զարգացում**
3. **Տեսատարածական պատկերացումների զարգացում**

1. «Ուշադիր լսում ենք Ի – ին հնչյունը»

Մեծահասակը ասում է բառեր, իսկ երեխան պետք է լսի և առանձնացնի Ի-ին հնչյունը: Բառեր՝ Շուն, Տուն, Ժամ, Ասեղ, Կով, Զատիկ...

«Ուշադիր լսում ենք վերջին հնչունը»

Մեծահասակը ասում է բառեր, երեխան պետք է նշի վերջին հնչյունը:

Բառեր՝ ծոՎ, թիթեՌ, մոՄ, գարուՆ, փոՍ, կատՈւ, գնդաԿ...

《Ուշադիր լսում ենք բառի բոլոր հնչյունները》

Սկզբում երեխային ասում ենք միավանկ բառեր, հետո ներմուծում երկվանկ և բազմավանկ բառեր: Օր.՝ սար ՍԱ Ր...

《Ծափ տու՛ր, երբ կլսես {ա} ձանավորը》

Սար, լար, բակ, կրակ, զենք, մարդ, սպորտ, որդ, սիրտ, մատ, մութ, զարդ, հնար, նշան, փեթակ, դաս, սանր, տորթ, փայտ, լեզու:

2. 《Վանկատի՛ր բառերը》

Բառեր՝ սեղան, մատիտ, հաց, սալոր, խոտ, ցորեն, նավաստի, աշուն, գիշեր, դուռ, դաշնամուր:

- Երեխան պետք է ծափերով առանձնացնի վանկերը և անվանի անպայման:
- Երեխային տալիս ենք թվային քարտեր, երբ նա լսի բառը, պետք է որոշի վանկերի քանակն ու ցույց տա համապատասխան քարտը:

《Բառախաղ》

Խաղը նախընտրելի է խաղալ խմբով կամ զույգով: Մի մասնակից ասում է որևէ բառ, իսկ մյուսը՝ առանձնացնում է նշված բառի վերջին հնչյունն ու այդ հնչյունով սկսվող նոր բառ կազմում: Այդպես հաջորդաբար խաղում եք, մինչև մասնակիցներից մեկը կպարտվի:

《Բառակազմություն》

Խաղում ենք նորից խմբով կամ զույգով: Համապատասխան տառ հնչյունով սկսվող բառեր ենք ասում հաջորդաբար, մինչև մասնակիցներից մեկը կպարտվի:

Հնչյունատառերն են՝ **Ա, Ս, Մ, Շ, Դ, Ն, Գ, Տ**

3. 《Աջ ձախ, վերևներքև》

Սլաք գծիր դեպի ձախ

սլաք գծիր ներքև

Սլաք գծիր դեպի աջ

սլաք գծիր դեպի վերև

《Քանի՞ պատկեր ես տեսնում, թվարկի՛ր պատկերներ》

«Կրկնի՛ր նույն գծապատկերը աջ այունակում»



«Գրաֆիկական թելադրություն»

Այս առաջադրանքը օգնում է երեխային լավագույնս կողմնորոշվել վանդակավոր թղթի վրա, կոկիկ՝ առանց սահմաններն անցնելու աշխատել, ուշադիր լսել և երևակայել և ամենակարևորը՝ ձեռքը գրչին նախապատրաստել:



2 →	4 ↓	1 →	2 ↑	1 →	1 ↑
4 →	1 ↓	1 →	3 ↓	1 ←	1 ↓
1 ←	1 ↑	4 ←	1 ↓	1 ←	1 ↑
1 ←	3 ↑	1 ←	2 ↑		



1 →	1 ↓	1 →	1 ↓	1 →	1 ↓
1 →	3 ↓	3 ←	1 ↓	5 →	1 ↓
1 ←	1 ↓	1 ←	1 ↓	7 ←	1 ↑
1 ←	1 ↑	1 ←	1 ↑	5 →	7 ↑



2 ←	1 →	1 →	1 →	1 →
1 ↑	4 ↑	1 ↑	1 ↓	1 ↓
1 →	1 →	1 →	2 →	11 ←
1 ↑	3 ↓	1 ↓	1 ↓	7 ↓
1 →	1 →	1 →	1 →	9 →
1 ↑	1 ↑	1 ↓	1 ↓	7 ↑